նշուած լինէր, որ նա գնացել է Հռոմ եւ հպատակութիւն յայտնել Յուլիոս Բ պապին (Anno Domini 1551 die 14 Ianuarij եւ Iulio Secundo Pontifici Max. reddidit obedientiam)։ Հետագայում՝ գաղութում լատինականութեան համար տարուող պայքարի շրջանում, այսինքն ԺԷ դարի 30-ական թուականներին (թէեւ առաջ մտածում էինք՝ 60-ական թթ.), երբ որոշել են նշանաւոր Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի համար տապանագիր պատրաստել, անգիտաբար դրա վրայ են փոխադրել նաեւ Ստեփանոս Ա-ի տապանագրի տեղեկութիւնները՝ առանց իմանալու, որ 1551 թ. յունուարի 14-ին Սալմաստեցին դեռ մեռած չէր, ինչպէս եւ առանց երկար-բարակ մտածելու, որ Յուլիոս Բ-ը եւ Ստեփանոս Սալմաստեցին ժամանակակիցներ չէին։ Տապանագրում երկու Ստեփանոսների շփոթման ու ձուլման մէջ դեր է խաղացել նաեւ այն հանգամանքը, որ, Ստեփանոս Ա-ի նման, Ստեփանոս Սալմաստեցին եւս գնացել էր Հռոմ։

ՄՇԵՑԻ ՅՈՎՀԱՆՆԻՍՈՒԿԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստեփանոս Սալմաստեցու կենսագրութեան հարցերի կապակցութեամբ մենք հրատարակել էինք Մշեցի Յովհաննիսուկի գրչին պատկանող երեք յիշատակարաններ[61], հանելով Ղեւոնդ վրդ. Փիրղալեմեանի կազմած անտիպ ժողովածուներից[62]։

Մեր այդ հրատարակութեան մէջ Յովհաննիսուկի առաջին յիշատակարանում ճշգրտման կարգով անկիւնաւոր փակագծերի մէջ աւելացրել էինք երկու բառեր, համարելով, որ դրանք «անուշադրութեան կամ շտապողականութեան հետեւանքով խուսափել են առանց այն էլ անփոյթ եւ անքերական շարադրող Մշեցի Օհաննիսուկի գրչից» եւ դրանցով «նախադասութիւնը դառնում է յստակ եւ հասկանալի». չէինք մոռացել նաեւ աւելացնել, որ տրամաբանական այդ լրացումը մեզանից առաջ կատարել էր նաեւ Փիրղալեմեանն ինքը՝ յիշատակարանների հաւաքողը»։ Տուեալ յիշատակարանում, որը գրուած է 1555 թուականին, Յովհաննիսուկը խնդրում է յիշել «զԳրիգոր Վարագեցի՝ նորաբողբոջ քաջ րաբունապետն ... եւ զուսուցիչն զՍտեփանոս կաթուղիկոս Սալմաստեցին. որ ի Ռ. (1551 թ.) թուին Հայոց առ Քրիստոս փոխեցաւ Ցիլով քաղաքին [եպիսկոպոսն], եւ [կաթուղիկոսն] եդ յաթոռ եպիսկոպոսութեան Իլովայ զԳրիգոր վարդապետն». իսկ Յովհաննիսուկի երկրորդ եւ երրորդ յիշատակարաններում ասւում էր. «Գրիգոր վարդապետն, որ թուին ՌԴ. (1555 թ.) յապրիլ ԺԴ. (14) եպիսկոպոս եղեւ Լով եւ համնից մայրաքաղաքացս» եւ «[զԳրիգոր վարդապետն] եդ կաթուղիկոսն՝ եպիսկոպոս քաղաքին [Լովայ]»։ Ըստ այս տուեալների՝ մենք գտնում էինք, — ինչպէս մեզանից էլ առաջ Փիրղալեմեանը գտել էր, — որ 1551 թ. մահացողը հայոց կաթողիկոսը չէր, այլ Լուովի նախկին աթոռակալը, հետեւաբար կաթողիկոսը, 1555 թ. գտնուելով Լուովում, այնտեղ թեմակալ էր նշանակել Գրիգոր Վարագեցուն։

Պետրովիչը, սակայն, առարկելի համարելով Յովհաննիսուկի յիշատակարանների համեմատութիւնից բխող մեր այս եզրակացութիւնը, բերել է հետեւեալ պատճառաբանութիւնը. «Գրիգոր Վարագեցիի նախորդը, Գալուստ Ստեփանեան, վախճանած էր 1542-ի ատեններ։ Այս պատմական իրողութիւնը, մեզի համաձայն, անվիճելի է։ Ուստի Յովհաննիսուկի յիշատակարանները կը վկայեն Ստեփանոս Սալմաստեցիի մահը՝ 1551-ին, Լէօպոլսոյ մէջ, եւ ոչ թէ Գրիգոր Վարագեցիին նախորդինը։ ... Ուրեմն, պէտք է եզրակացնենք՝ որ մեր ըսածներուս լոյսին տակ, Յովհաննիսուկի յիշատակարաններու այն մեկնութիւնը զոր տուած է արգոյ Անասեան՝ անհիմն է. եւ թէ այդ յիշատակարանները իր ըսածներուն ճիշդ հակառակը կը փաստեն»[63]։

---

61 Էջմիածին, 1956, № 8-9, էջ 97-98։

62 Երեւանի Պետական Մատենադարանի ձեռ. No. No. 6273 եւ 6332։

63 ՊՍՍ էջ 76-77։